

Հավելված T-1. COVID-19-ի վերաբերյալ արձանագրություն (պրոտոկոլ) TK-12 դպրոցների համար

Ծանոթություն. այս փաստաթուղթը հաճախակի թարմացվում է: Խնդրում ենք ստուգել կայքէջում նշված ամսաթիվը՝ ամենավերջին տարբերակը տեսնելու համար:

Վերջին թարմացումներ (փոփոխությունները նշված են դեղին գույնով)

10/04/2022

- Վերանայվել է՝ համապատասխանեցնելու համար Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության Առողջության Պատասխանատուի Հրամանի փոփոխություններին, որոնք վերաբերում են փակ տարածքում դիմակ կրելուն: Անհատների մեծ մասի համար դպրոցական միջավայրում դիմակ կրելը հիմնված է սեփական նախաընտրության վրա: Բացառություն են կազմում այն անձինք, որոնք COVID-19-ի հաստատված ախտորոշում ունենալուց հետո դպրոց են վերադարձել մեկուսացման 10 օրը չլրացրած, և այն անձինք, որոնք դեռ գտնվում են հաստատված COVID-19-ի հետ սերտ շփմանը հաջորդող 10-օրյա շրջանում: Այս անձանցից շարունակում է պահանջվել դիմակ կրել: Նաև, այն անձանց, որոնք ավելի խոցելի են ծանր COVID-19-ի հիվանդության նկատմամբ, խստորեն հորդորվում է բարձր պաշտպանության դիմակ կրել բազմամարդ, վատ օդափոխությամբ փակ տարածքներում:
- Դիմակ կրելը խորհուրդ է տրվում բոլոր անձանց, որոնք գտնվում են բուժակի կամ առողջապահական գրասենյակում, բացառությամբ այն աշխատակիցների, որոնք այդ տարածքում աշխատում են միայնակ:

9/15/2022

- Չեռացվել է հղումը Նահանգի Առողջության Պատասխանատուի Հրամանին, որը կապված էր Դպրոցներում Աշխատողների Պատվաստված Լինելը Ստուգելու հետ: Հրամանը չեղարկված է 2022թ.-ի սեպտեմբերի 17-ի դրությամբ:
- Հստկեցվել է Cal/OSHA-ի՝ Արտակարգ Իրավիճակների Ժամանակավոր Չափանիշների այն պահանջը, ըստ որի գործատուները պարտավոր են աշխատակիցներին տրամադրել շնչառական միջոցներ (respirators)՝ ըստ պահանջի կամավոր օգտագործման համար՝ **անկախ աշխատակիցների պատվաստման կարգավիճակից**:

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչությունը (DPH) որդեգրում է գիտական և հանրային առողջապահության փորձի վրա հիմնված փուլային մոտեցում՝ անցումային մանկապարտեզից մինչև 12-րդ դասարանի աշակերտներին սպասարկող դպրոցների համար: Ի

հավելումն այն պայմանների, որոնք դպրոցներին ներկայացված են Նահանգի Հանրային Առողջության Պատասխանատուի և Կալիֆորնիայի Կրթության Վարչության կողմից, դպրոցները պետք է բավարարեն նաև այս արձանագրության մեջ ընդգրկված ցանկացած պահանջ:

Խնդրում ենք նկատի ունենալ: Այս փաստաթուղթը կարող է թարմացվել նոր տեղեկությունների և աղբյուրների հասանելի դառնալու դեպքում: Այցելեք [Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության՝ TK-12-ի ուսումնական գործիքակազմ](#)՝ այս փաստաթղթի թարմացումների համար:

Այս փաստաթուղթը սկսվում է Լոս Անջելեսի Շրջանում (LAC) դպրոցի տարածքում կրթության ներկա դրույթների քննարկումով, որին հաջորդում են դպրոցի միջավայրին հատուկ անվտանգության ռազմավարությունների վերաբերյալ տեղեկությունները:

TK-12-ի այս արձանագրությունը (պրոտոկոլ) նախատեսում է անվտանգության միջոցառումներ հինգ ոլորտներում.

- (1) Աշխատավայրին հատուկ պահանջվող գործողությունների ծրագրեր ու գործնական քայլեր՝ պահպանելու աշխատակցների և աշակերտների առողջությունը
- (2) Միջոցառումներ, որոնք թույլ են տալիս բարելավել օդափոխությունը և նվազեցնել կուտակումները
- (3) Վարակի վերահսկումը լավագույնի հասցնելու միջոցառումներ
- (4) Հաղորդակցություն աշխատակիցների, աշակերտների ու աշակերտների ընտանիքների և հանրության հետ
- (5) Միջոցառումներ, որոնք ապահովում են հասանելիություն կարևոր ծառայություններին

Պահանջվող քաղաքականությունը և գործողությունները ներկայացված են առաջին բաժնում, իսկ հաջորդ չորս բաժինները պարունակում են բազմաթիվ ռազմավարություններ, որոնք ձեր դպրոցը կարող է ընտրել իրականացնել, երբ ձեր հաստատությունը մշակի ծրագիր՝ խթանելու բոլոր աշխատակիցների, աշակերտների և այցելուների անվտանգությունը: Չնայած կանխարգելող ու պաշտպանիչ որոշ գործողություններ պահանջվում են բոլոր դպրոցներից, միջոցառումների մեծ մասը ընտրովի է և կամավոր: Այնուամենայնիվ, նպատակահարմար է, որ դպրոցները կիրառեն COVID-19-ի մեղմացման ռազմավարության բազմաթիվ շերտեր՝ նվազեցնելու վտանգը և սահմանափակելու դպրոցի տարածքում հիվանդության դեպքերն ու տարածումը: Կան հավելյալ պահանջվող միջոցառումներ, որոնք նկարագրված են [Հավելված T2. Վարակի հետ շփումների կառավարման ծրագիր K-12 դպրոցներում](#)՝ փաստաթղթում և որոնք վերաբերում են տարածքում աշխատող ամբողջ անձնակազմին: TK-12 դպրոցների մասին հավելյալ տեղեկություններ կարելի է գտնել [TK-12 դպրոցների՝ COVID-19-ի գործիքակազմում](#):

Վերաբացման ընդհանուր ուղեցույց բոլոր դպրոցների համար

Այս պահին բոլոր դպրոցներին թույլատրվում է բաց լինել TK-12-ի ցանկացած դասարանի բոլոր աշակերտների համար:

Նշում երեխաների խնամքի ծրագրերի համար, որոնք գտնվում են դպրոցների տարածքում:

Տեղական կրթության գործակալությունները (LEAs) և դպրոցները, որոնք զբաղվում են երեխաների ցերեկային խնամքի ծառայություններով դպրոցի տարածքում, պետք է հետևեն Հանրային Առողջության Վարչության՝ [Նախադպրոցական խնամքի և կրթության մատակարարների ուղեցույցին](#):

COVID-19-ի դեմ ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԳԻՃՆ Է

Ձեր դպրոցում պատվաստման բարձր մակարդակի հասնելը առաջին և լավագույն միջոցն է դպրոցում վարակման և վարակի փոխանցման վտանգը նվազեցնելու, ամբողջովին պատվաստված անձանց շրջանում ծանր հիվանդանալու, հիվանդանոցում հայտնվելու և մահվան վտանգը մեծապես նվազեցնելու համար և պաշտպանության լրացուցիչ շերտ ապահովելու նրանց համար, որոնք չեն կարող լիովին պատվաստվել, ունեն իմունային անբավարարություն կամ լուրջ առողջական խնդիրներ: Այդ պատճառով, ի հավելումն այս արձանագրության մեջ գրված բոլոր պահանջների և հորդորների, դպրոցներին կոչ է արվում որդեգրել ռազմավարություններ, որոնք կարգավորում, խթանում և հեշտացնում են COVID-19-ի դեմ պատվաստումը և խթանիչ դեղաչափեր ստանալը դպրոցի անձնակազմի իրավասու բոլոր անդամների և աշակերտների համար: Խնդրում ենք կարդալ [Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության՝ պատվաստումների կլինիկայի գործիքակազմ դպրոցների համար](#) ուղեցույցը, որը քայլ առ քայլ նշում է դպրոցում պատվաստման կլինիկա ունենալու լավագույն գործողությունները: Նահանգը նաև հայտարարել է 2021թ.-ի հոկտեմբերի 1-ին իր ծրագրի մասին, որով աշակերտներից պահանջվում էր պատվաստվել դասարանային ուսուցման համար COVID-19-ի դեմ՝ սկսած այն կիսամյակի սկզբից, որը կհաջորդեր իրենց դասարանային մակարդակի համար (7-12 և K-6) պատվաստանյութի լիարժեք հաստատմանը Մենդի և Դեդդորայթի Գործակալության (FDA) կողմից: Սակայն այս պահանջը հետաձգվել էր մինչև 2022-2023 ուսումնական տարի, և ամենաշուտը այն կարող է ուժի մեծ լինել 2023թ.-ի հուլիսին: FDA-ը լիովին հաստատել է Pfizer Comirnaty պատվաստանյութը 12-15 տարեկան անձանց համար, ուստի Նահանգը կարող է պահանջել COVID-19-ի այս պատվաստումները 7-12-րդ դասարանցիների համար սկսած 2023թ.-ի հուլիսից:

TK-ից մինչև 12-րդ դասարանի՝ COVID-19-ի կանխարգելման ստուգաթերթ

Հաստատության անունը՝ _____

Հասցեն՝ _____

ՆՇՈՒՄ: «Աշխատակիցներ» և «աշխատակազմ» տերմիններն այս արձանագրություններում վերաբերում են այն անհատներին, որոնք դպրոցական հաստատությունում աշխատում են ցանկացած զբաղվածությամբ՝ կապված դասավանդման, մարզման, աշակերտների աջակցման, առանձին աշակերտների թերապիայի անցկացման կամ նրանց անհատական օժանդակություն տրամադրելու հետ, հաստատության մաքրման կամ սպասարկման, վարչական կամ ցանկացած այլ գործողության հետ, որն անհրաժեշտ է դպրոցի աշխատանքն ապահովելու համար: «Աշխատակիցները» կամ «աշխատակազմը» կարող են ներառել անհատների, որոնք անմիջականորեն վճարվում են համապատասխան դպրոցական համակարգի կողմից, վճարվում են հաստատությունների կողմից, որոնք գործում են որպես տվյալ դպրոցի կապալառուներ (պայմանագրային աշխատողներ), վճարվում են աշակերտներին ծառայելու համար դպրոցի հետ

համագործակցող դրսի հաստատությունների կողմից, վճարվում են երրորդ անձանց կողմից՝ աշակերտներին մատուցելու անհատական ծառայություններ, ինչպես նաև կարող են ներառել չվճարվող կամավորներ, ովքեր գործում են դպրոցի ղեկավարության ներքո՝ իրականացնելու անհրաժեշտ գործառնություններ: Այս արձանագրություններում «ծնողներ» տերմինն օգտագործվում է բոլոր այն անձանց համար, որոնք հանդիսանում են աշակերտների ինսամակալներ:

ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ՊԱՅԱՆՋՎՈՂ ԶԱՂԱՔԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՇԽԱՏԱՎԱԶՄԻՆ («ԱՇԽԱՏԱՎԻՑՆԵՐԻՆ») ԵՎ ԱՇՎԵՐՏՆԵՐԻՆ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ՆՇԵՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԲՈԼՈՐ ԿԵՏԵՐԸ)

Ա. Դպրոցը պետք է ունենա COVID-19-ի Զսպման, Արձագանքման և Վերահսկման Ծրագիր, որը նկարագրում է դպրոցի բազմակողմանի մոտեցումը՝ կանխելու և վերահսկելու դպրոցում COVID-19-ի տարածումը: Ծրագիրը ներառում է հետևյալ տարրերը, բայց չի սահմանափակվում միայն դրանցով.

☐ **Նշանակված COVID-19-ի Համապատասխանության Թիմ (compliance team)**, որը պատասխանատու է COVID-19-ի հետ կապված անվտանգության բոլոր արձանագրությունների (protocols) հաստատման և իրականացման համար, ինչպես նաև ապահովելու համար, որ աշխատակազմը և աշակերտները գիտելիք ստանան COVID-19-ի վերաբերյալ: Այս թիմի մեկ անդամ նշանակվում է Հանրային Առողջության Վարչության (DPH) հետ կապի պատասխանատու, եթե դպրոցի տարածքում բնակում է սկսվում:

☐ Արձանագրություն (պրոտոկոլ) այն քայլերի վերաբերյալ, որոնք անմիջապես պետք է ձեռնարկել, երբ դպրոցի ղեկավարությանը տեղեկացվում է, որ դպրոցական համայնքի որևէ անդամի (ուսուցչական կազմ, աշխատակից, աշակերտ կամ այցելու) COVID-19-ի թեստի արդյունքը դրական է:

- Վարակված անձի անհապաղ առանձնացում դպրոցական համայնքից, որպեսզի ինքնամեկուսանա տանը, եթե ծանուցումը ստանալու պահին վարակվածը դեռ դպրոցի տարածքում է: Ծրագիրը պետք է թույլ տա վարակվածի ժամանակավոր մեկուսացում դպրոցի տարածքում, եթե կարգավորումներ են հարկավոր, որպեսզի վարակված անձը վերադառնա տուն:
- Տեղեկատվական թերթիկներ կամ այլ նյութեր, որոնք պետք է տրվեն վարակվածին (կամ ընտանիքի համապատասխան անդամ(ներ)ին, եթե վարակվածը երեխա է), որոնք ընդգրկում են ինքնամեկուսացումը վերահսկող կանոնակարգեր և հավելյալ տեղեկություններ պարունակող կայքերին հղումներ:

☐ **Հավելված T2. TK-12 դպրոցներում վարակի հետ շփումների կառավարման ծրագիր** նախաձեռնելու արձանագրություն՝ **համապատասխան Հանրային Առողջության Վարչության ցուցումների**, որը նկարագրում է հետևյալ գործելակարգը.

- Վարակված(ներ)ի մեկուսացում
- Դպրոցում վարակի հետ շփված մարդկանց հայտնաբերում
- Վարակակրի հետ շփված աշխատակիցների և աշակերտների գործողություններ՝ **թուլացնելու վիրաուսի հավելյալ տարածումը:**
- Թեստավորման հասանելիության ապահովում դպրոցի տարածքում վարակակրի հետ շփված բոլոր աշակերտների և աշխատակիցների համար՝ անկախ պատվաստման կարգավիճակից:

☐ **Համապատասխանում Նոր դեպքերի մասին գեկուցման ուղեցույցին, որն ուժի մեջ է 2022թ.-ի օգոստոսի 1-ից:** Դպրոցներից պահանջվում է ծանուցել դասարանում, գրասենյակում, նախապես սահմանված կամ ճանաչելի խմբերում (օր.՝ թիմակիցներ, ակումբի անդամներ,

դասարանցիներ և այլն) 3 և ավելի դեպքերով COVID-19-ի խմբակային վարակների մասին, որոնք որևէ պահի դպրոցի տարածքում են եղել հիվանդությանը նախորդող 14 օրերի ընթացքում: Հիվանդության սկիզբ է համարվում COVID-19-ի ախտանիշերի հայտնվելու կամ COVID-19-ի թեստ հանձնելու օրը, որը որ ավելի շուտ է տեղի ունեցել: Բոլոր խմբակային դեպքերի մասին պետք է զեկուցվեն Հանրային Առողջության Վարչությանը անմիջապես և այդ դեպքերի մասին դպրոցի ծանուցվելուց հետո ոչ ուշ, քան 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ զեկուցող ուղարկելով առցանց՝ https://spot.cdph.ca.gov/s/?language=en_US, կամ զանգահարելով TK-12 Դպրոցների COVID-19-ի Դեպքերի Ծանուցման Չանգերի Կենտրոն: Ցանկացած հարցերի դեպքում կամ խմբակային դեպքերը զեկուցելու հարցում օգնության համար կապ հաստատեք Հանրային Առողջության Վարչության հետ՝ զանգահարելով TK-12 Դպրոցների COVID-19-ի Դեպքերի Ծանուցման Չանգերի Կենտրոն, կամ էլեկտրոնային նամակ ուղարկելով acdc-education@ph.lacounty.gov հասցեին: Հանրային Առողջության Վարչությունը (DPH) կաշխատի դպրոցի հետ՝ որոշելու՝ արդյոք վարակման խմբակային դեպքը բռնկում է, որի դեպքում կպահանջվի հանրային առողջության բռնկման արձագանք:

- ❑ Արտակարգ իրավիճակների ծրագրեր՝ անձամբ ներկայությունն պահանջող դպրոցական գործողությունների ամբողջական կամ մասնակի փակման համար, եթե դա անհրաժեշտություն դառնա դպրոցում կամ համայնքում վարակի բռնկման պատճառով: Դպրոցը մշակել և շրջանառության մեջ է դրել հաղորդակցության ծրագիր՝ կիրառելու, եթե COVID-19-ի խմբակային վարակի պատճառով պահանջվի դպրոցը ամբողջությամբ կամ մասնակի փակել:
- ❑ Արձանագրություն՝ COVID-19-ի վերստուգող թեստավորում ապահովելու համար: Արձանագրությունն առնվազն պետք է նկարագրի ռազմավարություն, որը կապահովի թեստավորման մատչելիություն այն աշակերտների ու աշխատակիցների համար, որոնք ունեն ախտանիշներ, և այն աշակերտների ու աշխատակիցների համար, որոնք հայտնի է կամ կասկած կա, որ շփվել են SARS-CoV-2-ով վարակված անձի հետ՝ անկախ պատվաստման կարգավիճակից: Նկատի ունեցեք, որ ներկայիս Cal/OSHA-ի COVID-19-ի Կանխարգելման՝ Արտակարգ Իրավիճակների Ժամանակավոր Չափանիշները ([Cal/OSHA ETS](#)) գործատուներից պահանջում են աշխատակիցներին վճարվող ժամերի ընթացքում առաջարկել անվճար թեստավորում՝
 - Ախտանիշներ ունեցող աշխատակիցներին՝ անկախ դրանից՝ կա վարակի հետ հայտնի շփում, թե ոչ:
 - Բոլոր աշխատակիցներին՝ վարակակրի հետ շփումից հետո, բացի այն սերտ շփում ունեցած աշխատակիցներից, որոնք նախորդ 90 օրվա ընթացքում վարակված են եղել SARS-CoV-2-ով:
 - Բռնկման ժամանակ թեստավորում պետք է առաջարկել բոլոր աշխատակիցներին՝ անկախ պատվաստման կարգավիճակից:
- ❑ Դպրոցի բոլոր մուտքերի մոտ փակցված է ցուցանակ, որը այցելուներին հայտնում է, որ իրենք չպետք է մտնեն հաստատություն, եթե ունեն COVID-19-ի ախտանիշներ:

Բ. Դպրոցում գործատուների և աշխատակիցների պարտավորություններ

- ❑ Այն աշխատակիցները, որոնք շփում են ունեցել կամ կասկած կա, որ շփում են ունեցել COVID-19-ի վարակակրի հետ, պետք է հետևեն շփմանը հաջորդող քայլերի ուղղորդումներին, որոնք մանրամասնված են [Հավելված T2. TK-12 դպրոցներում վարակի հետ շփումների կառավարման ծրագրում](#):
- ❑ Գործատուներից պահանջվում է, ըստ [Cal/OSHA-ի Արտակարգ Իրավիճակների Ժամանակավոր Չափանիշների](#), աշխատավայր չթողնել այն աշխատակիցներին, որոնք ունեն COVID-19-ի ախտանիշներ: Cal/OSHA-ն չի պարտադրում աշխատակիցների ստոգման հատուկ մեթոդ, սակայն խորհորդ տրվող որևէ մեթոդի կիրառումը կօգնի բավարարել այս պահանջը:
- ❑ Գործատուներից պահանջվում է կամավոր օգտագործման համար անվճար տրամադրել դեմքը լավ գրկող բժշկական դիմակներ և շնչառական միջոցներ (respirators), օրինակ՝ N95, KN95 կամ KF94,

դպրոցի այն աշխատակիցներին, ովքեր աշխատում են փակ տարածքում և շփվում են այլ աշխատողների, աշակերտների և հանրության անդամների հետ կամ որոնք մեկից ավելի անձանց հետ գտնվում են մեքենայում: Նկատի ունեցեք, որ CAL/OSHA-ն նաև պահանջում է, որ գործատուները կամավոր օգտագործման համար, ըստ պահանջի, շնչառական միջոցներ տրամադրեն ցանկացած աշխատակցի, որը աշխատում է փակ տարածքում կամ մեքենայում մեկից ավելի անձանց հետ՝ անկախ պատվաստման կարգավիճակից, ինչպես նաև նրանց տան հրահանգներ այն մասին, թե ինչպես ապահովել, որ դիմակը ճիշտ տեղավորվի դեմքին:

- Գործատուները պետք է ապահովեն, որ ոչ մի աշխատակցի չխոչընդոտեն դիմակ կրել՝ որպես պայման որևէ գործողության մասնակցելու կամ դպրոցի տարածք մտնելու համար, եթե դիմակ կրելը չի սպառնում անվտանգությանը:
- Այն աշխատակիցները, որոնք զբաղվում են այնպիսի գործողություններով, ինչպիսիք են առանձին աշակերտներին ֆիզիկական թերապիայի կամ օժանդակության տրամադրումը, պետք է կրեն անհատական պաշտպանության համապատասխան միջոցներ (ձեռնոցներ, դիմակներ, խալաթներ և այլն): _____

C. Դիմակ կրելու պահանջների իրականացում

Բոլոր դպրոցներից պահանջվում է կատարել հանրային առողջության պատասխանատուի հրամանները, որոնք պահանջում են դիմակ կրել Լոս Անջելեսի Շրջանում, և պատրաստ ունենալ ծրագրեր՝ այս պահանջները աշխատողներին, այցելուներին, ծնողներին ու աշակերտներին փոխանցելու համար:

- Դիմակից ազատվելու քաղաքականություն:** Այն դեպքերում, երբ Հանրային Առողջության Պատասխանատուի Հրամանը հանրնդհանուր պահանջում է դիմակ կրել փակ հանրային տարածքներում, ներառյալ դպրոցներում, կարող են կիրառվել այլընտրանքային պաշտպանական ռազմավարություններ, որպեսզի հարմարեցվեն այն աշակերտներին, որոնք ընդգրկված են Անհատականացված Կրթության մեջ կամ 504 Ծրագրում և չեն կարող դիմանալ դիմակներին կամ այնպիսի վիճակում են, որ դիմակ կրելը խնդիրներ է առաջացնում մանկավարժական, աշակերտների անվտանգության կամ գոյություն ունեցող անկարողության/ հաշմանդամության պատճառներով: Անհատները կարող են ազատվել դիմակ կրելուց հետևյալ պատճառներով.

- Երկու տարեկանից փոքր անձնիք:
- Անձինք, որոնք ունեն լսողության խնդիրներ կամ հաղորդակցվում են լսողության խնդիրներ ունեցող անձանց հետ, որի դեպքում բերանը տեսնելու կարողությունը կարևոր է շփման համար:
- Անձինք, որոնք ունեն առողջական, հոգեկան առողջության խնդիրներ, հաշմանդամություն կամ որոնք բուժաշխատողը որոշել է, որ իրենց համար վտանգավոր է դիմակ կրելը, կարող են դիմում ներկայացնել իրենց դպրոցին՝ պահանջից ազատվելու համար: Որպես դիմակ կրելուց ազատվելու ապացույց կընդունվի նահանգային արտոնագիր ունեցող բուժաշխատողի կողմից տրամադրված վկայագիրը, որը հաստատում է, որ երեխան ունի այնպիսի առողջական խնդիր կամ հաշմանդամություն, որը խոչընդոտում է նրան անվտանգ կերպով դիմակ կրել: Այդպիսի վկայագրեր կարող են տրամադրել առողջապահության ոլորտի հետևյալ արտոնավորված մասնագետները՝ բժշկական ծառայություններ տրամադրողը, ներառյալ բժիշկը (MD կամ DO), բուժակը (NP) կամ բժշկի օգնականը (PA), որոնք գործում են արտոնավորված բժշկի իրավասության ներքո, և արտոնավորված հոգեկան և վարքագծային առողջության մասնագետները, այդ թվում՝ Կլինիկական Սոցիալական Աշխատողը (LCSW), Կլինիկական Հոգեբանը (Psy.D.), Մասնագիտացված Կլինիկական Խորհրդատու (LPCC) կամ Ամուսնական և Ընտանեկան Հարցերով Մասնագետը (LMFT):

Այն դեպքերում, երբ Հանրային Առողջության Պատասխանատուի Հրամանները բոլորից

հանրնդհանուր պահանջում են դիմակ կրել փակ հանրային տարածքներում, կամ պահանջում են դիմակ կրել որոշակի մարդկանցից, աշակերտները, որոնք ազատված են դիմակ կրելու պահանջից, պետք է կրեն դեմքի վահաններ՝ ստորին հատվածում ամրացված կտորով, եթե իրենց վիճակը դա թույլ է տալիս: Դպրոցները պետք է ակտիվ շփման մեջ լինեն այն աշակերտների հետ, որոնցից կպահանջվեր դիմակ կրել, բայց հիմնավոր պատճառով ազատված են այդ պահանջից, և կարող են ընտրել կիրառել այլընտրանքային պաշտպանական ռազմավարություններ, երբ օժանդակում են այսպիսի աշակերտներին: Այլընտրանքային ռազմավարությունները, որոնք կարող են դիտարկվել, ներառում են՝ դիմակ չկրող ցանկացած աշակերտի կանոնավոր (օր.՝ շաբաթական) ստուգիչ թեստավորում, ռազմավարություններ՝ բարելավելու դիմակ չկրող աշակերտներին տրամադրվող փակ տարածքների օդափոխությունը, դիմակ չկրող աշակերտներին բաց պատուհաններին ավելի մոտ նստեցնելը, օդը կլանող հովիարների (exhaust fans), ջեռուցման, օդափոխության և օդորակման (HVAC) համակարգի և շարժական օդի գոլիչների օգտագործում և ավելի բարձր պաշտպանության շնչառական միջոցներ տրամադրում (օր.՝ N95, KN95, KF94) այն աշակերտներին ու աշխատողներին, որոնք դիմակ չկրող աշակերտների հետ գտնվում են միևնույն փակ տարածքում:

- Դիմակ կրելու պահանջից ազատում սերտ շփում ունեցած անձանց համար: Անկախ փակ տարածքներում դիմակ կրելու համընդհանուր քաղաքականությունից՝ Լոս Անջելեսի Շրջանի՝ Կարանտինի Ընդհանուր Հրամանը ներկայումս պահանջում է, որ վարակվածի հետ սերտ շփում ունեցած անձինք, որոնք ախտանիշներ չունեն, վերջին շփումից հետո 10 օր կրեն բարձր պաշտպանության դիմակ, երբ փակ տարածքներում գտնվում են այլ մարկանց հետ, և 3-5-րդ օրը առնվազն մեկ անգամ թեստավորվեն, եթե ուզում են խուսափել տանը կարանտին պահելուց: Այն աշակերտները, որոնք համարվում են սերտ շփում ունեցած և դիմակ կրելուց հիմնավորումով ազատված և որոնք ուզում են դպրոցում մնալ վարակի հետ շփումից հետո, պետք է շարունակեն ախտանիշներ չունենալ, վարակի հետ շփումից հետո 10 օր հետևեն՝ արդյոք ախտանիշներ առաջանում են, և ունենան բացասական պատասխանով առնվազն մեկ թեստ վարակի հետ վերջին շփումից 3-5 օր հետ և ևս մեկը՝ վարակի հետ շփումից 6-9 օր հետ: Այն աշակերտները, որոնք չեն կարող բավարարել այս պահանջները և չեն կարող դիմակ կրել վարակակրի հետ շփումից հետո, պետք է տասը օր վարակակրի հետ շփումից հետո մնան տանը: Ավելին, դպրոցի աշակերտները, աշխատակազմը և վարչական աշխատողները պետք է համագործակցեն Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության՝ վարակի բռնկման հետաքննողների հետ, որոնք կարող են իրականացնել ժամանակավոր ռազմավարություններ, որոնք տարբերվում են այս արձանագրության կանոններից, եթե դպրոցում բռնկում լինի: Օրինակ՝ այն աշակերտներին, որոնք չեն կարող դիմակ կրել, կարող է հրահանգվել բռնկման ընթացքում մնալ տանը՝ հանուն այդ աշակերտների և դպրոցի ամբողջ համայնքի ապահովության:
- Այն աշխատակիցների համար, որոնք չեն կարող դիմակ կրել, կարողացեք վարակակրի հետ շփումից հետո աշխատանքի վերադառնալու պահանջները՝ ներկայացված Cal/OSHA-ի Արտակարգ Իրավիճակների Ժամանակավոր Չափանիշներում:

D. Արձանագրության տարածում

- Այս արձանագրության կրկնօրինակները բաժանվել են բոլոր աշխատակիցներին:
- Այս արձանագրության կրկնօրինակը փակցված է դպրոցի գրասենյակում և վերբեռնված է դպրոցի կամ դպրոցական շրջանի հանրային կայքում:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ԹՈՒՅԼ ՏԱԼՈՒ ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԱՇԿԵՐՏՆԵՐԻ ԵՎ ԱՅՅԵԼՈՒՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ (ՆՇԵՔ ԲՈԼՈՐԸ, ՈՐՈՆՔ

ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ)

- Խստորեն հորդորվում է իրականացնել միջոցառումներ՝ խթանելու դպրոցում լավագույն օդափոխության ապահովումը: Սրանք կարող են ներառել (նշեք բոլորը, որոնք կիրառելի են)՝
 - Դասասենյակներում սովորելու, սնվելու և այլ գործողությունների տեղափոխումը բացօթյա տարածք առավելագույնի է հասցվում, երբ դա հնարավոր է և եթե դա թույլ է տալիս եղանակը:
 - Դպրոցի օդափոխման (HVAC) համակարգը աշխատող լավ վիճակում է: Նախքան դպրոցի վերաբացումը նկատի ունեցեք HVAC համակարգի ստուգումը համապատասխան ինժեների կողմից, որը ծանոթ է Դպրոցների վերաբացման ուղեցույցին՝ մշակված Ջեռուցման, Սառեցման և Օդափոխության Ինժեներների Ամերիկյան Ընկերության կողմից (ASHRAE): _____
 - Օդափոխման համակարգերը գործի են դրված՝ առավելագույնի հասցնելու ներսի/դրսի օդի փոխանակությունը, եթե դրսի պայմանները (վերջերս պատահած հրդեհներ, դրսի շատ բարձր ջերմաստիճան, օդում ծաղկափոշու բարձր քանակություն և այլն) սա չեն դարձնում աննպաստ:
 - Հնարավորության դեպքում տեղադրվել են շարժական, բարձր արդյունավետության օդազտիչ սարքեր: _____
 - Դռները և պատուհանները դպրոցական օրվա ընթացքում բաց են մնում, եթե հնարավոր է և եթե դրսի պայմանները դա թույլ են տալիս: Պետք է հաշվի առնվեն գործող հրդեհային անվտանգության օրենքները, որոնք պահանջում են հակահրդեհային դռների փակում: _____
 - Օդի զտիչները նորացվել են ավելի բարձր արդյունավետություն ապահովելու համար (նախընտրելի է MERV-13 կամ ավելի բարձր կարգը): _____
 - Զանի որ մարզական սենյակներում տեղավորելիությունը մեծ է և տեղի են ունենում բարձր վտանգավորության գործողություններ, մարզադահլիճներում բարելավված օդափոխությունը կարևորագույն ռազմավարություն է՝ նվազեցնելու վիրուսների փոխանցման և բռնկումների վտանգը, որն առաջանում է բարձր վտանգավորության մրցակցային խաղերի արդյունքում: Օդափոխությունը հատակի մակարդակում բարելավելու համար օդափոխիչների նպատակաուղղված օգտագործումը կարող է զգալի ազդեցություն ունենալ այդ վտանգի նվազեցման վրա: Հավելյալ ցուցումների համար տե՛ս [Մարզադահլիճներում օդափոխության լավագույն գործողությունները](#): _____
 - Այլ՝ _____
 - Դպրոցներում օդի որակի բարելավման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները, ներառյալ CDC-ի ինտերակտիվ գործիքակազմը և Կալիֆորնիայի Հանրային Առողջության Վարչության ուղեցույցը, հասանելի են Լոս Անջելեսի Հանրային Առողջության Վարչության [TK-12 դպրոցների՝ COVID-19-ի գործիքակազմում](#):
- Նկատի ունեցեք կիրառել այնպիսի միջոցներ, որոնք կբարելավեն դպրոցական փոխադրամիջոցներում օդափոխությունը և կավելացնեն աշակերտների՝ ֆիզիկական հեռավորության պահպանումը: Այս միջոցառումները կարող են ընդգրկել (նշեք բոլորը, որոնք կիրառելի են)՝
 - Ավտոբուսի յուրաքանչյուր նստարանին նստում է մեկ երեխա: _____
 - Օգտվում են ընդմիջվող շարքերից: _____
 - Պատուհանները բաց են, եթե օդի որակը և ուղևորների անվտանգությունը հնարավորություն են տալիս: _____
- Նկատի ունեցեք կիրառել այնպիսի միջոցներ, որոնք կնվազեցնեն կուտակումները, երբ աշակերտները, ծնողները կամ այցելուները մտնեն դպրոցի տարածք և շարժվեն այնտեղով: Սրանք

կարող են ներառել (նշեք բոլորը, որոնք կիրառելի են)

- Դպրոցի աշխատակիցները կանգնում են միջանցքներում՝ ֆիզիկական հեռավորության պահպանումը խթանելու և դանդաղումներն ու կուտակումները նվազեցնելու համար, երբ աշակերտները ներս են մտնում և շարժվում դեպի դասասենյակներ: _____
- Նկատի ունեցեք կիրառել այնպիսի միջոցներ, որոնք թույլ կտան դասարաններում ֆիզիկական հեռավորության պահպանում, երբ հնարավոր է՝ առանց միջամտելու հիմնական գործողություններին: Սրանք կարող են ներառել հետևյալ միջոցառումները (նշեք բոլորը, որոնք կիրառելի են).
 - Դասարանի կահույքը դասավորված է՝ առավելագույնի հասցնելու աշակերտների միջև և աշակերտների և ուսուցիչների միջև հեռավորությունը: Որպես լավագույն գործողություն՝ խուսափեք դասարաններում նստատեղերը շրջանաձև դասավորելուց: Երբ հեռավորություն պահպանել հնարավոր չէ, դիտարկեք անվտանգության այլ միջոցների կիրառումը, ներառյալ բարելավված օդափոխությունը:
 - Դասարանների քնելու կամ հանգստանալու տարածքներում աշակերտներին տեղավորում են ավելացված հեռավորությամբ՝ պահպանելով ոտք և գլուխ դիրքը:
 - Այլ՝ _____
- Նկատի ունեցեք ֆիզիկական դաստիարակության դասերը որքան հնարավոր է շատ դրսում անցկացնելը:
- Նկատի ունեցեք իրականացնել դպրոցական այնպիսի քաղաքականություն, որը խթանում է հանդերձարաններում ֆիզիկական հեռավորության պահպանումը: Քաղաքականությունը կարող է ներառել՝
 - Հանդերձարանների հասանելիություն՝ հերթափոխով: Դիտարկեք սահմանափակելը այն ժամանակը, որը աշակերտներն ու աշակերտ-մարզիկներն անցկացնում են հանդերձարաններում, օրինակ՝ առաջարկեք աշակերտ-մարզիկներին մարզվելուց և խաղալուց հետո ցնցուղ ընդունել տանը:
 - Աշակերտների հագուստի, գրքերի և այլ պարագաների պահման այլընտրանքային տարբերակների ստեղծում:
- Հաշվի առեք այնպիսի միջոցառումների իրականացումը, որոնք կավելացնեն ֆիզիկական հեռավորությունը ճաշելու ժամանակ, երբ աշակերտները կլինեն փակ տարածքում և առանց դիմակի: Սրանք կարող են ներառել (նշեք բոլորը, որոնք կիրառելի են)՝
 - Եթե աշակերտները շարք են կանգնում սնունդը վերցնելու համար, օգտագործվում են կաշուն ժապավեն կամ այլ զծանշաններ՝ աշակերտների միջև պատշաճ հեռավորության պահպանումը խթանելու համար: _____
 - Եթե ճաշում են ճաշարանում, ապա սնվելու ժամերը փոփոխվում են, որպեսզի նվազեցվի միաժամանակ ճաշարանում գտնվող խմբերի քանակը: _____
 - Եթե ճաշում են ճաշարանում, սեղանների/աթոռների միջև տարածությունն ընդլայնվում է, որպեսզի ուտելու ժամանակ աշակերտների միջև պահպանվի հեռավորություն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ ԼԱՎԱԳՈՒՅՆԻ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ՆՇԵՔ ԲՈԼՈՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ)

- Խորհուրդ է տրվում [աշխատակիցների ստուգում](#) անել նախքան աշխատակիցները կմտնեն աշխատավայր. նույնն է նաև աշակերտների ու այցելուների համար: Մուտքի ստուգումը պետք է ներառի հազի, հևոցի, շնչելու դժվարության և ջերմության կամ դողի ստուգում, ինչպես նաև

պարզի՝ արդյոք աշխատակիցը ներկա պահին ունի մեկուսանալու կամ կարանտին պահելու հրաման: Այս ստուգումները կարելի է անել տեղում՝ ներս մտնելու պահին, կամ հեռավար եղանակով՝ նախքան գալը օգտագործելով թվային հավելվածներ կամ այլ միջոցներ:

- Այն աշակերտների, անձնակազմի անդամների և այցելուների մասին, որոնց ստուգման արդյունքը դրական է եղել մուտքի պահին կամ դպրոցական օրվա ընթացքում ցանկացած պահի, պետք է տեղեկացնել COVID-19-ի Համապատասխանության Խմբին (Compliance Team): COVID-19-ի Համապատասխանության Խումբը կորոշի՝ արդյոք անձը պետք է հեռանա հաստատությունից՝ համաձայն Հանրային Առողջության Վարչության՝ կրթական հաստատություններում [Ախտանիշների և վարակի հետ շփումների ստուգման ուղեցույցի](#): Այն աշակերտներին, որոնց ստուգման արդյունքը դրական է, պետք է տրամադրել վիրաբուժական դիմակ, եթե արդեն նրանք չեն կրում խորհուրդ տրվող որակի դիմակ, և տեղափոխել նախապես ընտրված մեկուսացման տարածք, որտեղ նրանք կարող են մնալ մինչև հեռանալու մասին որոշում կկայացվի և կկազմակերպվի նրանց վերադարձը այն տուն, որը նշված է:

- ❑ Չափահասների և միջին ու ավագ դպրոցի տարիքի աշակերտների ստուգումը ներս մտնելուց առաջ պետք է ներառի հարց այն մասին, թե արդյոք նրանք վերջին 10 օրվա ընթացքում տանը, դպրոցում կամ մեկ այլ վայրում սերտ շփում են ունեցել որևէ մեկի հետ, որը ունեցել է COVID-19 -ի թեստի դրական արդյունք: Ցանկացած անձ, որին ստուգել են՝ պարզելու վերջերս ունեցած շփումը, և որը հայտնել է վարակակրի հետ սերտ շփման մասին, պետք է ղեկավարվի՝ համաձայն [Հավելված T2. TK-12 դպրոցներում վարակի հետ շփումների կառավարման ծրագրի](#) ուղղորդումների:

- ❑ Դպրոցները կարող են ընդունել ռազմավարություն՝ կանոնավոր թեստավորելու ախտանիշներ չունեցող անձանց, որոնք վարակակրի հետ հայտնի շփում չեն ունեցել: Կալիֆորնիայի Հանրային Առողջության Վարչությունը (CDPH) այս պահին չի պահանջում որևէ հատուկ հաճախականություն կամ մեթոդ՝ ախտանիշներ չունեցող անձանց թեստավորման համար: Սակայն համայնքում վարակի տարածման մեծացման և հոսպիտալացումների ավելացման ժամանակ, օրինակ՝ երբ Լոս Անջելեսի Շրջանը գտնվում է Բարձր համայնքային մակարդակում, ինչպես սահմանված է CDC-ի կողմից, հավանական է, որ բոլոր աշակերտների և աշխատակազմի կանոնավոր թեստավորումը, անկախ պատվաստման կարգավիճակից*, կբացահայտի բազմաթիվ դրական դեպքեր, որոնք հակառակ դեպքում կմնային չնկատված և թույլ կտային դպրոցի տարածքում վարակի ավելի մեծ տարածում: Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչությունն ունի դպրոցներին հասանելի միջոցներ՝ նպաստելու թեստավորման կարողությանը: Թեստավորման միջոցների մասին հարցերը կարող են ուղարկվել այստեղ՝ ACDC-Education@ph.lacounty.gov:

- *Ստուգիչ թեստավորումը խորհուրդ չի տրվում այն անձանց, որոնք առողջացել են լաբորատորիայում հաստատված COVID-19-ից վերջին 90 օրվա ընթացքում և չունեն ախտանիշներ:

- ❑ Եթե դպրոցը չի ընտրել կիրառել դիմակ կրելու ավելի խիստ քաղաքականություն՝ բոլորի համար ապահովելու ավելի բարձր մակարդակի պաշտպանություն, համաձայն Առողջության Պատասխանատուի գործող Հրամանի՝ դիմակ կրելը կարող է հիմնված լինել սեփական [Նախընտրության վրա](#) բոլոր այն անձանց համար, որոնք մտնում են դպրոցի շենքերի փակ տարածքներ կամ փոխադրամիջոց (դպրոցի ավտոբուսներ կամ դպրոցի շենքեր), և բոլոր նրանց համար, որոնք շփում են ունենում այլ մարդկանց հետ (աշակերտներ, ծնողներ կամ այլ աշխատակիցներ): Բոլոր այն անձանց, որոնց համար ծանր հիվանդանալու վտանգը մեծ է, դեռևս [խստորեն հորդորվում է բարձր պաշտպանության դիմակ կրել հետևյալ վայրերում](#).

- Վատ օդափոխությամբ փակ տարածքներ
- Մարդաշատ վայրեր, որտեղ բազմաթիվ մարդիկ գտնվում են իրար մոտ և
- Անմիջական շփման վայրեր, հատկապես որտեղ մարդիկ խոսում են (կամ ծանր շնչում են)՝ գտնվելով իրար մոտ:

- ❑ Համաձայնեցնելով CDC-ի՝ K-12-ի գործողությունների ուղեցույցի հետ՝ դիմակ կրելը խորհուրդ է

տրվում բոլոր անձանց, որոնք գտնվում են բուժակի կամ առողջապահական գրասենյակում, բացառությամբ երբ դպրոցի բուժակը կամ այլ աշխատակից միայնակ է աշխատում այդ տարածքում:

Այս արձանագրության ոչ մի կետով չի պահանջվում, որ դպրոցներն ավելի լավ պաշտպանող դիմակներ տրամադրեն իրենց աշակերտների ընհանուր հանրության այն անդամերին, որոնք **Նախընտրում են կրել դրանք**: Սակայն, որպեսզի դպրոցում մշտապես ապահովություն լինի, խորհուրդ է տրվում ունենալ դիմակների պաշար այն աշակերտների համար, որոնց մոտ կարող են ախտանիշներ հայտնվել դպրոցական օրվա ընթացքում:

- Դիմակների վերաբերյալ Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության թարմացված ուղեցույցների և վերջին տեղեկությունների համար կարդացեք [COVID-19-ի դիմակները](#):
 - Մանկավարժական նկատառումներ: Այն ընթացքում, երբ Առողջության Պատասխանատուի Հրամանը հաղնդհանուր պահանջում է դիմակ կրել փակ տարածքներում, կամ եթե դիմակ կրելը պարտադիր չէ, սակայն աշխատակիցները **Նախընտրում են կամավոր դիմակ կրել, ուսուցիչները և անձնակազմի այլ անդամները, որոնք մտահոգված են հնչյունաբանական ուսուցման հնարավոր խոչընդոտներով, պետք է դիտարկեն դիմակները փոխարինելը թափանցիկ մասերով, որոնցով տեսանելի են շուրթերն ու բերանը**: Այս հատուկ գործողության ժամանակ նրանք կարող են նաև դիտարկել դեմքի ծածկերը ներքևի մասում կտոր ունեցող վահանով փոխարինելու հնարավորությունը:
- Փակ տարածքներում **բարձր գտման, դեմքին կիպ Նստող** դիմակների **կամավոր** օգտագործումը աշխատակազմի, աշակերտների և այցելուների կողմից **Նպատակահարմար է, քանի որ դիմակ կրելը շարունակում է մնալ արդյունավետ նպաստող ռազմավարություն՝ սահմանափակելու դպրոցի տարածքում վարակի փոխանցման վտանգը**:
- **Դպրոցներին խրախուսվում է** դպրոցի մուտքի, դպրոցի գրասենյակերնի մոտ և ամբողջ դպրոցի տարածքում ունենալ ցուցանակներ, որոնք **Նշում են, որ դիմակներն արդյունավետ են COVID-19-ի և շնչառական այլ հիվանդությունների տարածումը կանխելու հարցում, և նշում են դիմակը ճիշտ կրելու ձևը նրանց համար, ովքեր ընտրում են այն կրել**: _____
 - Ավելի փոքր երեխաների ծնողներին, ովքեր **Նախընտրում են**, որ իրենց երեխան շարունակի դիմակ կրել, խրախուսվում է ամեն օր երեխային տրամադրել երկրորդ դիմակ այն դեպքերի համար, երբ այն մեկը, որը երեխան կրում է, կեղտոտվի. սա թույլ կտա օրվա ընթացքում փոխել դիմակը: _____
- Խորհուրդ է տրվում պատրաստ ունենալ միջոցներ, որոնք կխթանեն դպրոցի ամբողջ տարածքի, մակերեսների և առարկաների պատշաճ մաքրումը: Դրանք կարող են ներառել (նշեք բոլորը, որոնք կիրառելի են)`
- Ավտոբուսները մանրակրկիտ մաքրվում են ամեն օր և ախտահանվում են COVID-19-ի ախտանշաններ ունեցող ցանկացած անձի տեղափոխելուց հետո: Վարորդներին տրամադրվում են ախտահանիչ թաց անձեռոցիկներ և մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ՝ երթևեկության ընթացքում անհրաժեշտության դեպքում մակերեսները ախտահանելու համար:
 - Մաքրող ապրանքատեսակները, որոնք արդյունավետ են COVID-19-ի դեմ (դրանք թվարկված են Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության (EPA) “N” հաստատված ցուցակում), կիրառվում են՝ համաձայն արտադրողի ցուցումների: Եթե EPA-ի կողմից հաստատված ախտահանիչ միջոցները հասանելի չեն, ապա կարող են կիրառվել այլընտրանքային միջոցներ (օրինակ՝ 1/3 բաժակ սպիտակեցնող (bleach) լուծույթը՝ խառնած մեկ գալոն ջրի հետ, կամ 70% սպիրտ պարունակող լուծույթներ): Իրար մի՛ խառնեք սպիտակեցնող (bleach) կամ այլ մաքրող ու ախտահանիչ միջոցները. դա առաջացնում է

թունավոր գոյորշիներ, որոնք կարող են շատ վտանգավոր լինել շնչելու համար: _____

- Մաքրողները և անձնակազմի այլ անդամները, ովքեր պատասխանատու են դպրոցում մակերեսների և առարկաների մաքրման ու ախտահանման համար, պատրաստված են՝ կյութերը օգտագործելու ըստ արտադրողի ցուցումների, ինչպես նաև Cal OSHA անվտանգ օգտագործման պահանջներին և «Առողջ Դպրոցների Մասին» օրենքին համապատասխան, եթե կիրառելի է: _____
- Մաքրողները և անձնակազմի այլ անդամները, ովքեր պատասխանատու են մաքրման և ախտահանման համար, կրում են անձնական պաշտպանության համապատասխան միջոցներ (PPE), ներառյալ՝ ձեռնոցներ, աչքերի պաշտպանիչ միջոցներ, շնչառական պաշտպանիչ միջոցներ և այլ համապատասխան պաշտպանիչ միջոցներ, որոնք պահանջվում են տվյալ ապրանքն օգտագործելիս: _____
- Բոլոր մաքրող միջոցները պահվում են երեխաների համար անհասանելի և սահմանափակ մուտքով տարածքներում: _____
- Մաքրման և ախտահանման ժամանակ օդափոխությունը հնարավորինս առավելագույնի է հասցվում: Եթե օդորակիչ է օգտագործվում, կիրառել այն գործողությունը, որը դրսի օդ է ներս բերում: Պետք է փոխել և ստուգել օդի զտիչները և զտիչ համակարգը՝ ապահովելու օդի լավագույն որակ: _____
- Պետքարանները, Նախասենյակները, ընդմիջման սենյակները և հանգստի ու այլ ընդհանուր տարածքները մաքրվում են ստորև ներկայացված հաճախականությամբ: Սահմանված մաքրումը խորհուրդ է տրվում աշխատանքային ժամերին ոչ պակաս, քան օրական մեկ անգամ, սակայն կարող է իրականացվել ավելի հաճախ:
 - Պետքարաններ _____
 - Նախասենյակներ/մուտքի տարածքներ _____
 - Ուսուցիչների/աշխատակազմի ընդմիջման սենյակներ _____
 - Դասասենյակներ _____
 - Ճաշարանի ճաշելու տարածք _____
 - Ճաշարանի սննդի պատրաստման տարածք _____
 - Ընդունարան _____
 - Այլ գրասենյակներ _____
 - Այլ տարածքներ _____

Խորհուրդ է տրվում միջոցառումների իրականացում՝ խթանելու աշխատակազմի, աշակերտների և այցելուների՝ ձեռքերը հաճախակի լվանալը: Սա կարող է ներառել (նշեք բոլորը, որոնք կիրառելի են)՝

- Աշակերտներին և աշխատակազմին հաճախակի հնարավորություններ են տրվում ձեռքերը 20 վայրկյան օճառով լվանալ՝ օճառը քսելուց հետո լավ տրորելով, և օգտագործել չհպվող ձեռքերի չորացուցիչներ կամ թղթե սրբիչներ (կամ մեկանգամյա օգտագործման կտորե սրբիչներ)՝ ձեռքերը լիակատար չորացնելու համար: _____
- Ավելի կրտսեր աշակերտների համար նախատեսվում է կանոնավոր և հաճախակի ընդմիջումներ՝ ձեռքը լվանալու համար, ներառյալ՝ ուսելուց առաջ և հետո, պետքարանից օգտվելուց հետո, բացօթյա խաղից հետո և խմբային ցանկացած գործողությունից առաջ և հետո: _____
- Էթիլային սպիրտի հիմքով (պարունակում է առնվազն 60% էթանոլ) ձեռքի ախտահանիչ միջոցը դպրոցի ողջ տարածքում հասանելի է աշակերտներին և անձնակազմին բոլոր կարևոր կետերում, որտեղ չկա լվացարան կամ ձեռքի լվացման շարժական կայան (դասասենյակներում կամ դրանց մոտ, սենյակներում, որտեղ տրամադրվում են օժանդակող ծառայություններ, երաժշտության և արվեստի սենյակներում): Նախընտրելի է Էթիլային սպիրտի հիմքով ձեռքերի ախտահանիչ միջոցը, և դա պետք է օգտագործվի դպրոցի տարածքում: Իզոպրոպիլային սպիրտը որպես հիմնական ակտիվ բաղադրիչ պարունակող ձեռքերի ախտահանիչ միջոցները

դպրոցում չեն օգտագործվում, քանի որ դրանք ավելի գրգռիչ են և կարող են ներծծվել մաշկի միջոցով: _____

- Սպիրտ պարունակող ձեռքերի ախտահանիչ միջոցներ կուլ տալը կարող է սպիրտային թունավորում առաջացնել: Ձեռքերի ախտահանիչ միջոցը չպետք է բաց լինի, և մինչև 9 տարեկան երեխաները պետք է այն օգտագործեն մեծահասակների հսկողությամբ: Ուսուցիչները և անձնակազմի աշխատակիցները պետք է տեղեկացված լինեն կուլ տալու վտանգի մասին և պետք է զանգահարեն թունավորումների Վերահսկման Կենտրոն հետևյալ հեռախոսահամարով՝ 1-800-222-1222, եթե հիմք կա մտածելու, որ աշակերտը կուլ է տվել ձեռքերի ախտահանման հեղուկ: _____
- Ձեռքերի ախտահանիչ միջոցները, օճառը և ջուրը, անձեռոցիկները և աղբարկղերը հասանելի են հանրությանը հաստատության մուտքի մոտ կամ մոտակայքում, ընդունարանում և աշխատավայրի ցանկացած այլ մասում կամ անմիջապես դրսում, որտեղ մարդիկ անմիջականորեն շփվում են: _____

Խորհուրդ է տրվում, որ COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքի ախտահանիչ միջոցները հասանելի լինեն բոլոր աշխատակիցներին հետևյալ տարածքներում կամ դրանց մոտ (նշեք բոլորը, որոնք կիրառելի են)՝

- Շենքերի մուտք(եր)/ ելք(եր) _____
- Կենտոնական գրասենյակ _____
- Աստիճանների մուտքեր _____
- Վերելակի մուտք (եթե կիրառելի է) _____
- Դասասենյակներ _____
- Ուսուցիչների ընդմիջման սենյակ _____
- Ուսուցիչների գրասենյակներ _____

ՀԱՏՈՒԿ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ՝ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ընդհանուր նկատառումներ: Ֆիզիկական ուժի գործադրումը և այլ գործողությունները, որոնք դեպքում շնորհաբերությունը ծանր է կամ ավելի է ծանրանում, օրինակ՝ մարմնական շփում ենթադրող սպորտաձևերը, երգեցողությունը, փողային գործիքներ նվագելը, պարելը կամ թատերական փորձերի կամ ելույթների ժամանակ խոսելը /արտասանելը, մեծացնում են վարակի փոխանցման վտանգը, հատկապես փակ տարածքներում: Ներկա դրությամբ, համաձայնեցնելով Առողջության Պատասխանատուի Հրամանի հետ՝ այս գործողությունների ժամանակ դիմակ կրելը հիմնված է անձնական նախընտրության վրա: Այնուամենայնիվ, դպրոցները, կատարողական արվեստների դասարաններն ու ակումբները և պատանեկան սպորտային ակումբներն ու միությունները ազատ են՝ ընտրելու ավելի զգուշավոր մոտեցումներ և իրականացնելու դիմակ կրելու կամ թեստավորման ավելի խիստ քաղաքականություն այս բարձր վտանգավորության գործողությունների համար: Նաև, կարդացեք [Լոս Անջելեսի Շրջանի COVID-19-ի արձագանքման ծրագիրը](#), որը նշում է, որ եթե դասարաններում բռնկումների վաղ ահազանգի թվերը հասնեն անհանգստացնող աստիճանի, դիմակ կրելը խստորեն կհորդորվի այս բարձր վտանգավորության գործողությունների համար:

- Դպրոցական մարզաձևեր**
- Խմբային ցանկացած մարզաձև, ներառյալ սպորտային թիմերը և ակումբները, **պետք է կարդան [Հավելված S. արձանագրություններ \(պրոտոկոլ\) պատանեկան խմբային մարզաձևերի համար](#)** փաստաթուղթը և հետևեն այնտեղ նշված պահանջներին՝ նվազեցնելու COVID-19-ի տարածումը: Այստեղ ներկայացվում են որոշ հատուկ խորհուրդներ, սակայն դրանք չեն փոխարինում Հավելված S-ին:
 - Նույնիսկ բացօթյա սպորտաձևերում կարող են լինել բարձր վտանգավորության շփումներ, որոնք տեղի են ունենում փակ տարածքներում, ներառյալ թիմի ավտոբուսով ճամփորդելիս,

քաշային վարժություններ անելիս, հանդերձարանում այլ մարդկանց հետ լինելիս, խաղային ֆիլմեր դիտելիս և այլն: Սպորտային ծրագրերը պետք է որոշեն՝ արդյոք անհրաժեշտ են անվտանգության լրացուցիչ միջոցառումներ, ինչպես օրինակ՝ այս միջավայրերում դիմակ կրելը, պատվաստում պահանջելը, կանոնավոր թեստավորումը, քաշային վարժությունների սենյակներում և հանդերձարաններում միաժամանակ գտնվողների թվի սահմանափակումը և հնարավորության դեպքում գործողությունները բացօթյա տարածք տեղափոխելը:

- Եթե երիտասարդական սպորտային գործողությունները անց են կացվում փակ տարածքներում, ապահովեք, որ ձեր շինության Ջեռուցման, Օդափոխության և Օդորակման (HVAC) համակարգը պատշաճ աշխատանքային վիճակում լինի: Մարզասրահներում օդափոխումը կարելի է բարելավել հատակի հովհարների նպատակաուղղված տեղադրումով: Տե՛ս գծապատկերներն այստեղ՝ [Մարզասրահների օդափոխության լավագույն գործողությունները](#):

❑ Երաժշտության դասեր

- Դպրոցները պետք է որոշեն՝ արդյոք անվտանգության լրացուցիչ միջոցներ պետք է կիրառել, երբ խմբային պայմաններում փողային գործիքներ են նվագում կամ երգում են, հատկապես փակ տարածքներում: Որոշ առաջարկություններ ներառում են՝
 - Փողային գործիքներ նվագող **անձինք**, ամեն անգամ, երբ նվագում են գործիքը, **կարող են** կրել ձևափոխված դիմակ, որը թույլ է տալիս անմիջական շփում գործիքի բերանի հատվածի հետ: Այն ընթացքում, երբ աշակերտները ակտիվորեն չեն պարապում կամ ելույթ չեն ունենում, նրանք **կարող են ընտրել** կրել ամբողջական դիմակներ:
 - **Խորհուրդ է տրվում** փողային գործիքներ նվագելիս օգտագործել ծածկոցներ՝ գործիքների զանգակաձև բացված հատվածների համար (bell cover):
 - **Նկատի ունեցեք** փողային գործիք նվագող անձի և մյուս բոլոր մասնակիցների միջև որոշակի հեռավորություն պահպանել (**խորհուրդ է տրվում առնվազն 3 ոտնաչափ**):
 - **Նկատի ունեցեք** առնվազն շաբաթը մեկ անգամ **կատարել** փակ տարածքում խմբային գործողություններին կամ ելույթներին մասնակցող **բոլոր** անձանց կանոնավոր ստուգիչ թեստավորում, **հատկապես** եթե չեն կիրառվում դիմակներ, գործիքների զանգակաձև բացված հատվածների ծածկոցներ (bell cover) և հեռավորության պահպանում:
 - Հնարավորության դեպքում այս գործողությունները տեղափոխեք բացօթյա տարածք, ինչը զգալիորեն կնվազեցնի վատ օդափոխության և մարդաշատ փակ տարածքների հետ կապված վտանգները: Կախված նրանից, թե զգուշավորության ինչ մակարդակ են ուզում ապահովել՝ բաց տարածքներում կարող են կիրառվել նաև վերը նշված անվտանգության լրացուցիչ միջոցները, օրինակ՝ ձևափոխված դիմակներ, գործիքների զանգակաձև բացված հատվածների ծածկոցներ (bell cover) և հեռավորության պահպանում:
- Խմբային միջավայրում երաժշտական գործողությունների ժամանակ, ներառյալ՝ երգեցողության, նկատի ունեցեք մասնակիցների միջև տարածությունը մեծացնել և **հնարավորության դեպքում** այս գործողություններն անցկացնել դրսում: **Մեկ այլ նկատառում է** խմբի բոլոր անդամներին շաբաթական առնվազն մեկ անգամ կանոնավոր ստուգիչ թեստավորում անելը, եթե փակ տարածքներում երգիչները երգում են առանց դիմակների և առանց պահպանելու խորհուրդ տրվող հեռավորությունը:
- Հնարավորության դեպքում օգտագործել մեկանգամյա ներծծող բարձիկներ կամ այլ անոթներ՝ թքի կամ ջրի արտանետման փականների պարունակությունը հավաքելու համար. օգտագործելուց հետո դրանք դեն նետել կամ պատշաճ կերպով մաքրել:

❑ Թատրոնի դասեր

- **Նկատի ունեցեք** մասնակիցների **միջև պահպանել** հավելյալ ֆիզիկական հեռավորություն, երբ նրանք արտասանում /խոսում են **և դիմակ չեն կրում** (օրինակ՝ թատրոնի աշխատանիստին (workshop) մասնակցող անձինք):
- **Դիտարկեք** շաբաթական առնվազն մեկ անգամ բոլոր մասնակիցներին **կանոնավոր** թեստավորելը, եթե փակ տարածքներում պարապելիս կամ փորձեր անելիս դիմակներ չեն օգտագործվում և ֆիզիկական հեռավորություն չի պահպանվում:
- **Դիտարկեք** փակ տարածքների փոխարեն վիրտուալ կամ բացօթյա տարածքներում փորձերի և ելույթների անցկացումը, **երբ դա հնարավոր է:**

❑ Պարի դասեր

- **Այն շարժումների ժամանակ**, որոնց դեպքում ֆիզիկական ծանր ջանքերի **պատճառով** առաջացնում են ավելի մեծ ծավալի շնչառական կաթիլներ, **նկատի ունեցեք** մեծացնել տարածությունը անհատների միջև և/**կամ տեղափոխել այս** գործողությունները բացօթյա տարածք:
- **Դիտարկեք** շաբաթական առնվազն մեկ անգամ բոլոր մասնակիցներին **կանոնավոր** թեստավորելը, եթե փակ տարածքներում պարապելիս կամ փորձեր անելիս դիմակներ չեն օգտագործվում և ֆիզիկական հեռավորություն չի պահպանվում:

❑ Երաժշտության ձայնագրում

- **Նկատի ունեցեք** **ձայնային** խցիկ կամ **ձայնագրման խցիկում** ավելացնել հեռավորությունը երգիչների և մյուսների միջև, հատկապես եթե երգիչները դիմակ չեն կրում, քանի որ համեմատաբար փոքր, սահմանափակ մուտքով փակ տարածքում շնչառական կաթիլներն արտանետվում են մեծ քանակությամբ:
- **Եթե** ձայնային խցիկում փողային գործիքներ **նվագում են** այլ անձանց ներկայությամբ, հետևեք վերը նշված երաժշտության դասընթացների բաժնի **խորհուրդներին**՝ անվտանգությունը բարելավելու և վտանգը մեղմացնելու հետ:
- **Բացի փողային երաժաշտությունից**, խմբային այլ գործիքային երաժշտություն նույնպես կարելի է ձայնագրել ձայնային խցիկում. այնուամենայնիվ, **նկատի ունեցեք** բոլոր երաժիշտների միջև **պահպանել** առնվազն 3 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն, **երբ դա հնարավոր է**, **հատկապես եթե դիմակներ չեն օգտագործվում:**
- Շաբաթական առնվազն մեկ անգամ կանոնավոր ստուգիչ թեստավորումը խստորեն խորհուրդ է տրվում այն բոլոր մասնակիցներին, որոնք միասին են գտնվում խցիկում, եթե ամբողջ ընթացքում բոլորը դիմակներ չեն կրում և ֆիզիկական հեռավորությունը չի պահպանվում:
- Նախքան խցիկը կօգտագործվի մեկ այլ երաժշտի կամ երաժիշտների խմբի կողմից, պետք է խցիկը լավ օդափոխվի (դիտարկեք օդը մաքրող սարք օգտագործելու տարբերակը)՝ թույլատրելու օդի ամբողջական հոսքը, իսկ համատեղ օգտագործվող սարքավորումները (օրինակ՝ խոսափողերը) պետք է ախտահանվեն:

❑ Ելույթներ

- Ցանկացած ելույթ պետք է հետևի **[Ավելի փոքր միջոցառումների համար լավագույն գործողությունների ուղեցույցին](#)**՝ COVID-19-ի տարածման վտանգը նվազեցնելու համար, եթե

ձեր ելույթը կամ միջոցառումը Մեզա Միջոցառում չէ (սահմանվում է որպես փակ տարածքներում ավելի քան 1000 մասնակիցներով կամ բացօթյա տարածքներում ավելի քան 10000 մասնակիցներով միջոցառում), իսկ այդ դեպքում դուք պետք է հետևեք [Մեզա միջոցառումների ուղեցույցին](#):

- **Նկատի ունեցեք** TK-12 դպրոցների կողմից հովանավորվող բոլոր ելույթների ժամանակ կիրառել անվտանգության լրացուցիչ միջոցներ, **հատկապես եթե** դիմակներ **չեն օգտագործվում** փակ տարածքում **ելույթի ժամանակ**: **Նկատի ունեցեք**, որ ելույթ ունեցողները և բեմում աշխատող անձնակազմի անդամները, որոնք սերտ շփում են ունենում ելույթ ունեցողների հետ, **կանոնավոր կերպով թեստավորվեն շաբաթական առնվազն մեկ անգամ**՝ սկսած խմբի առաջին հավաքինց ոչ ավել, քան 72 ժամ առաջ, և շարունակելով մինչև նախատեսված վերջին ներկայացման ավարտը:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Նախքան դպրոցի սկսվելը անհրաժեշտ է տեղեկություններ ուղարկել ծնողներին և աշակերտներին դպրոցի քաղաքականության մասին, որոնք վերաբերում են հետևյալին (ևշեք բոլորը, որոնք կիրառելի են).
 - Մեկուսացման և կարանտինի գործողությունների սկզբունքներ, քանի որ դրանք կիրառվում են այն աշակերտների նկատմամբ, որոնք ախտանիշներ ունեն կամ հնարավոր է՝ շփվել են COVID-19-ով վարակվածի հետ: _____
 - COVID-19-ի թեստավորման հնարավորություններ, եթե աշակերտը կամ ընտանիքի անդամը ախտանիշներ ունի կամ շփվել է COVID-19-ով վարակվածի հետ: _____
 - Դպրոցում ում դիմել, եթե աշակերտը ախտանիշներ ունի կամ հնարավոր է, որ շփվել է վարակակրի հետ՝ _____
 - Ինչպես իրականացնել ախտանիշների ստուգում մինչ աշակերտի տնից դուս գալը: _____
 - **Դիմակների արդյունավետությունը՝ COVID-19-ի և շնչառական այլ վարակների փոխանցումը նվազեցնելու համար, և յուրաքանչյուր անձի իրավունքը՝ սեփական նախընտրությամբ դիմակ կրելու և առանց դրա համար միջամտություն կամ խտրականության սպառնալիք ստանալու:** _____
 - Աշակերտների կողմից ֆիզիկական հեռավորության պահպանման և վարակի վերահսկմանը վերաբերող ցանկացած գործող քաղաքականությանը հետևելու կարևորությունը: _____
 - Փոփոխություններ ուսումնական և արտադպրոցական ծրագրի մեջ՝ վտանգները կանխելու նպատակով: _____
 - Դպրոցի գործունեության ծրագրեր՝ ծնողների դպրոց այցելությունների և դպրոցի հետ հեռավար կապ հաստատելու նպատակահարմարության վերաբերյալ : _____
 - Շտապ դեպքերում դպրոցի կողմից կապ հաստատելու համար թարմ տվյալների տրամադրման կարևորությունը, ներառյալ՝ ծնողների հետ կապ հաստատելու մի քանի տարբերակներ: _____
 - Այլ՝ _____

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՊԱՅՈՎՈՒՄ ԵՆ ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՎԱՍԱՐ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

- Մշակվել է Անհատականացված Կրթական Ծրագրերի (IEPs) և հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար նախատեսված 504 Ծրագրերի թարմացման նախագիծ՝ ապահովելու, որ կրթությունը շարունակվի առանց աշակերտի համար անհարկի վտանգի:

- Այս նախագիծը ներառում է ուսումնական տարվա սկզբին ծնողների հետ ակտիվ շփման մեթոդ՝ ապահովելու, որ երեխայի կրթության և անվտանգության հետ կապված հարցերին անդրադարձ լինի:
 - Անհատական IEP-ների և 504 ծրագրերի փոփոխությունները կարող են ներառել հեռավար ուսուցում, դասասենյակների փոփոխություններ՝ հարմարեցնելով երեխաների կարիքներին, հաճախում դպրոց՝ առանձնացված տարածքում քիչ թվով աշակերտների հետ, կամ միաձուլված (հիբրիդային) մոտեցում՝ կրթությունը համատեղելով դասարանային և հեռավար ուսուցման հետ:
 - IEP-ների և 504 ծրագրերի փոփոխման քայլեր, որոնց նպատակն է ապահովել, որ աշակերտների անվտանգությունը համապատասխանի նահանգային և դաշնային օրենքների համապատասխան դրույթներին:
- Վարչական ծառայությունները կամ գործողությունները, որոնք կարելի է առաջարկել հեռավար կարգով (օր.՝ տվյալ առարկայի համար գրանցում, ձևաթղթի հանձնում և այլն) տեղափոխվել են առցանց:

Ցանկացած լրացուցիչ միջոցառում, որն ընդգրկված չէ վերևում, պետք է նշվի առանձին էջերի վրա, որոնք պետք է կցված լինեն այս փաստաթղթին:

Սույն արձանագրության հետ կապված ցանկացած հարցի կամ դիտողության համար կարող եք կապ հաստատել հետևյալ անձի հետ.

Բիզնեսի կապի անձի անուն՝ _____

Հեռախոսահամար՝ _____

Վերջին վերանայման ամսաթիվ՝ _____